ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N275-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի հոդվածների համաձայն: Նախագիծը մշակելիս հաշվի է առնվել բյուջեի մնացորդների մասին Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի կողմից տրված տեղեկանքը:

Համայնքի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 71361.143 հազար դրամ, իսկ ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդը 697295.264 հազար դրամ: Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից 32000.0 հազար դրամը կուղղվի «Լուսավորության» ծրագրին, 20000.0 հազար դրամը «Աղբահանության» ծրագրին, 10000.0 հազար դրամը «Կոմունալ» ծրագրին, 9370.743 հազար դրամը պետական կառավարման ապարատի պահպանման ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը: Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կուղղվի ֆոնդային բյուջեի պարտքերի մարմանը:

Անհրաժեշտություն է առաջացել փոփոխելու պետության կողմից հատկացված սուբվենցիաներից մուտքերի թիվը, այն ավելացել է 456124.0 հազար դրամով և կազմել է 2274224.0 հազար դրամ:

Քանի որ բյուջեն կրում է նորմատիվ բնույթ, ուստի նրա մեջ կատարվող փոփոխության նախագիծը ևս կրում է նորմատիվ բնույթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ն. ՍԱՐԳՍՅԱՆ**